

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ 2017-2018 ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

ՔՐԵԱԿԱՆ ՈԼՈՐՏ

(քրեական գործեր, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող միջնորդություններ)

2018 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է 4844 քրեական գործ, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին ու դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող 22474 միջնորդություն (ընդհանուրը՝ $4844+22474=27318$)¹:

Ստացված 4844 քրեական գործից ավարտվել է 2968-ը (61,3%):

Ստացված 22474 միջնորդություններից ավարտվել է 21139-ը (94%):

(Ընդհանուր առմամբ ավարտվել է 24107 դատական գործ ($2968+21139=24107$) 88.2%):


Համեմատության կարգով նշենք, որ 2017 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է 5027 քրեական գործ, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին ու դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող 20675 միջնորդություն (ընդհանուրը՝ $5027+20675=25702$):

Ստացված 5027 քրեական գործից ավարտվել է 3036-ը (60,4%):

Ստացված 20675 միջնորդություններից ավարտվել է 19699-ը (95,3%):

(Ընդհանուր առմամբ ավարտվել է 22735 դատական գործ ($3036+19699=22735$) 88,5%):

¹ Հիշյալ թվի մեջ ներառված են նաև նախորդ հաշվետու ժամանակահատվածից փոխանցված գործերը: Տվյալ դիտարկումը վերաբերելի է նաև մյուս տեսակի դատական գործերին և բողոքներին:



2018 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից ավարտված 2968 քրեական գործերով դատական ակտ է կայացվել 3740 անձի վերաբերյալ, այդ թվում՝ 2295 գործով (77,3%) կայացվել է դատավճիռ՝ 3034 անձի նկատմամբ, 607 գործով (20,5%) կայացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում՝ 639 անձի վերաբերյալ, 64 գործով (2,2%)՝ 65 անմեղսունակ անձանց վերաբերյալ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ, 1 գործով 1 անձի վերաբերյալ կայացվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցը մերժելու մասին որոշում, 1 գործ 1 անձի վերաբերյալ քննության առարկա չի դարձվել՝ դատախազի կողմից ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքով:

Համեմատության կարգով նշենք, որ 2017 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից ավարտված 3036 քրեական գործերով դատական ակտ է կայացվել 3919 անձի վերաբերյալ, այդ թվում՝ 2766 գործով (91,2%) կայացվել է դատավճիռ՝ 3626 անձի նկատմամբ, 211 գործով (6,9%) կայացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում՝ 235 անձի վերաբերյալ, 58 գործով (1,9%)՝ 58 անմեղսունակ անձանց վերաբերյալ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ, 1 գործ 1 անձի վերաբերյալ քննության առարկա չի դարձվել՝ դատախազի կողմից ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքով:

ՀՀ դատարանների կողմից հաշվետու ժամանակահատվածում կայացվել է 202 դատական ակտ 241 անձի ($241:3673*100=6,5\%$) վերաբերյալ, որից 212 (88%) անձ ձեռք է բերել լրիվ արդարացվածի կարգավիճակ, իսկ 29 (12%) անձ՝ մասնակի արդարացվածի կարգավիճակ:²

Հիշյալ 202 դատական ակտերից 104 դատական ակտ (96-ը լրիվ, 8-ը մասնակի)՝ 119 անձի վերաբերյալ (108-ը լրիվ, 11-ը մասնակի), 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ մտել է օրինական ուժի մեջ:

Համեմատության կարգով նշենք, որ 2017 թվականի ընթացքում լրիվ կամ մասնակի արդարացվել է 180 ($180:3861*100=4,7\%$) անձ, որից 142-ը ($142:3861*100=3,7\%$)՝ լրիվ, իսկ 38-ը ($38:3861*100=1\%$)՝ մասնակի:

Այսինքն, 2017 թվականի համեմատությամբ 2018 թվականին արդարացվածների քանակն ավելացել է 61-ով (33,9%):

2018 թվականի ընթացքում դատապարտվել է 2809 ($3034-(241-16)=2809$) 92,6% ($2809:3034*100=92,6\%$) անձ, որից 1963 անձի նկատմամբ կայացված դատավճիռները հաշվետու ժամանակահատվածում մտել են օրինական ուժի մեջ:

Հիշյալ 1963 անձանցից՝

- ազատազրկման ձևով պատիժ է նշանակվել 1148 (58,5%) անձի նկատմամբ,
- կալանքի ձևով՝ 142 (7,2%) անձի նկատմամբ,
- տուգանքի ձևով՝ 594 (30,2%) անձի նկատմամբ,
- այլ պատժի կամ հարկադրանքի միջոցի ձևով՝ 79 (4,1%) անձի նկատմամբ:

Պատիժը պայմանականորեն չի կիրառվել 757 անձի նկատմամբ ($757:(1148+142=1290)*100=58.7\%$):

Համեմատության կարգով նշենք, որ 2017 թվականի ընթացքում դատապարտվել է 3488 ($3626-(142-4)=3488$) 96.2% ($3488:3626*100=96.2\%$) անձ, որից 2410 անձի նկատմամբ կայացված դատավճիռները հաշվետու ժամանակահատվածում մտել են օրինական ուժի մեջ:

Հիշյալ 2410 անձանցից՝

² Հիշյալ թվերի մեջ ներառված են նաև քրեական գործի վարույթը կարճելու մասին ՀՀ դատարանների կողմից կայացված որոշումները (14 դատական ակտ՝ 16 անձի վերաբերյալ):

- ազատագրված ծնով պատիժ է նշանակվել 1410 (58,5%) անձի նկատմամբ,
- կալանքի ծնով՝ 181 (7,5%) անձի նկատմամբ,
- կարգապահական գումարտակում պահելու ծնով՝ 1 (0,1%) անձի նկատմամբ,
- փուլային ծնով՝ 752 (31,2%) անձի նկատմամբ,
- այլ պատժի կամ հարկադրանքի միջոցի ծնով՝ 66 (2,7%) անձի նկատմամբ:

Պատիժը պայմանականորեն չի կիրառվել 859 անձի նկատմամբ ($859:(1410+181+1)*100=53.9\%$):

Այսպիսով, 2018 թվականի ընթացքում՝ 2017 թվականի համեմատությամբ, ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացված քրեական գործերի քանակն նվազել է 183-ով ($5027-4844=428$) 3,6% ($183:5027*100=3,6\%$), ըստ ավարտված գործերի՝ դատի տրված անձանց թիվը նվազել է 179-ով ($3919-3740=179$) 4,6% ($179:3919*100=4,6\%$), դատապարտվածների թիվը նվազել է 679-ով ($3488-2809=679$) 4,5% ($149:3339*100=4,5\%$), դատապարտյալների թիվը նվազել է 447-ով ($2410-1963=447$) 18,5% ($447:2410*100=18,5\%$), անձանց թիվը, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել նվազել է 102-ով ($859-757=102$) 11,9% ($102:859*100=11,9\%$), իսկ արդարացվածների թիվն ավելացել է 61-ով ($241-180=61$) 33,8% ($61:180*100=33,8\%$):

Հարկ է նշել, որ ինչպես 2017 թվականին, այնպես էլ 2018 թվականին դատապարտված անձանց թվում որոշակի նվազումներով հանդերձ զգալի թիվ է կազմել գողության, առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, ինչպես նաև դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար դատապարտվածների քանակը:

Այսպես.

- 2017 թվականի ընթացքում գողության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդված) դատապարտվել է 432 անձ (դատապարտվածների թվի 12,4%-ը, $432:3488*100=12,4\%$), առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդված)՝ 274 անձ (դատապարտվածների թվի 7,8%-ը, $274:3488*100=7,8\%$), դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդված)՝ 75 անձ (դատապարտվածների թվի 2,1%-ը, $75:3488*100=2,1\%$):

- 2018 թվականի ընթացքում գողության համար (<< քրեական օրենսգրքի 177-րդ հոդված)՝ 387 անձ (դատապարտվածների թվի 13,8%-ը, $387:2809*100=13,8\%$), առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության համար (<< քրեական օրենսգրքի 268-րդ հոդված)՝ 181 անձ (դատապարտվածների թվի 6,4%-ը, $181:2809*100=6,4\%$), դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար (<< քրեական օրենսգրքի 112-րդ հոդված)՝ 68 անձ (դատապարտվածների թվի 2,4%-ը, $68:2809*100=2,4\%$):

Այսպիսով, 2018 թվականի ընթացքում՝ 2017 թվականի համեմատությամբ գողության համար դատապարտվածների թիվը նվազել է 45-ով ($432-387=45$) 10,4% ($45:432*100=10,4\%$), առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության համար դատապարտվածների թիվը նվազել է 93-ով ($274-181=93$) 34% ($93:274*100=34\%$), դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար դատապարտվածների թիվը նվազել է 7-ով ($75-68=7$) 9,3% ($7:75*100=9,3\%$):

Դրանից բացի, զգալի նվազում է արձանագրվել նաև համեմատվող ժամանակահատվածում դիտարկված ներքոհիշյալ հանցագործությունների համար դատապարտվածների թվում:

Այսպես.

- Սպանության համար (<< քրեական օրենսգրքի 104-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 27 անձ, իսկ 2018 թվականին՝ 13, նվազումը՝ 14 ($27-13=14$) անձ (51,8%): Հիշյալ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2015 թվականին դատապարտվել է 17 անձ, իսկ 2016 թվականին՝ 21: Այսինքն՝ կարող ենք արձանագրել, որ նշված հոդվածով վերջին երեք տարիների ընթացքում դատապարտվածների թվում տեղի է ունեցել դինամիկ աճ, որից հետո՝ 2018 թվականին, տեղի է ունեցել կտրուկ նվազում:

- Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու համար (<< քրեական օրենսգրքի 113-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 15 անձ, իսկ 2018 թվականին՝ 11, նվազումը՝ 4 ($15-11=4$) անձ (26,7%): Հիշյալ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2016 թվականին դատապարտվել է 23 անձ:

- Դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու համար (<< քրեական օրենսգրքի 117-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 25 անձ, իսկ 2018 թվականին՝ 8, նվազումը՝ 17 ($25-8=17$) անձ (68%):

- Ծեծի համար (<< քրեական օրենսգրքի 118-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 65 անձ, իսկ 2018 թվականին՝ 51, նվազումը՝ 14 ($65-51=14$) անձ (21,5%): Հիշյալ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2016 թվականին դատապարտվել է 72 անձ:

- Մարդուն առևանգելու համար (<< քրեական օրենսգրքի 131-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 43 անձ, իսկ 2018 թվականին՝ 28, նվազումը՝ 15 ($43-28=15$) անձ (34,9%):

- Բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու համար (<< քրեական օրենսգրքի 147-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 21 անձ, իսկ 2018 թվականին՝ 18, նվազումը՝ 3 ($21-18=3$) անձ (14,3%):

- Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու համար (<< քրեական օրենսգրքի 164-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 5 անձ, իսկ 2018 թվականին՝ 2, նվազումը՝ 3 ($5-2=3$) անձ:

- Ավագակության համար (<< քրեական օրենսգրքի 175-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 14 անձ, իսկ 2018 թվականին՝ 5, նվազումը՝ 9 ($14-5=9$) անձ: Հիշյալ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2015 թվականին դատապարտվել է 36 անձ, իսկ 2016 թվականին՝ 25:

- Խարդախության համար (<< քրեական օրենսգրքի 178-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 91 անձ, իսկ 2018 թվականին՝ 67, նվազումը՝ 24 ($91-67=24$) անձ (26,4%):

- Գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու համար (<< քրեական օրենսգրքի 185-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 19 անձ, իսկ 2018 թվականին՝ 13, նվազումը՝ 6 ($19-13=6$) անձ: Հիշյալ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2016 թվականին դատապարտվել է 24 անձ:

- Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար (<< քրեական օրենսգրքի 235-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 93 անձ, իսկ 2018 թվականին՝ 59, նվազումը՝ 34 ($93-59=34$) անձ (36,5%):

- Ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու համար (<< քրեական օրենսգրքի 242-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 119 անձ, իսկ 2018 թվականին՝ 66, նվազումը՝ 53 ($119-66=53$) անձ (44,5%): Հիշյալ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2015 թվականին դատապարտվել է 82 անձ, իսկ 2016 թվականին՝ 116:

- Տրանսպորտային միջոցը հարբած կամ տասնվեց տարին չլրացած անձին հանձնելու համար (<< քրեական օրենսգրքի 243-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 4 անձ, իսկ 2018 թվականին՝ 2, նվազումը՝ 2 ($4-2=2$) անձ: Հիշյալ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2016 թվականին դատապարտվել է 26 անձ:

- Ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելու համար (<< քրեական օրենսգրքի 244-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 8 անձ, իսկ 2018 թվականին՝ 3, նվազումը՝ 5 ($8-3=5$) անձ:

- Խուլիգանության համար (<< քրեական օրենսգրքի 258-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 57 անձ, իսկ 2018 թվականին՝ 49, նվազումը՝ 8 ($57-49=8$) անձ (14%): Հիշյալ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2015 թվականին՝ 115 անձ, իսկ 2016 թվականին՝ 79 անձ: Այսինքն՝ կարող ենք արձանագրել, որ նշված հոդվածով վերջին տարիների ընթացքում դատապարտվածների թվում տեղի է ունեցել դինամիկ նվազում:

- Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրականացման կամ դրանց ապօրինի իրացման համար (<< քրեական օրենսգրքի 266-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 35 անձ, իսկ 2018 թվականին՝ 20, նվազումը՝ 15 ($35-20=15$) անձ: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հիշյալ հոդվածով 2015 թվականին՝ 44 անձ, իսկ 2016 թվականին՝ 41 անձ: Այսինքն՝ կարող ենք արձանագրել, որ նշված հոդվածով վերջին տարիների ընթացքում դատապարտվածների թվում տեղի է ունեցել դինամիկ նվազում:

- Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու համար (<< քրեական օրենսգրքի 316-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 31 անձ, իսկ 2018 թվականին՝ 22, նվազումը՝ 9 ($31-22=9$) անձ:

-Պետական սահմանն ապօրինի հատելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 23 անձ, իսկ 2018 թվականին՝ 15, նվազումը՝ 8 ($23-15=8$) անձ:

-Սուտ մատնության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 80 անձ, իսկ 2018 թվականին՝ 36, նվազումը՝ 44 ($80-36=44$) անձ (55%):

Միաժամանակ, աճ է արձանագրվել ստորև ներկայացվող հանցագործությունների համար դատապարտվածների թվում:

Այսպես.

- Զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելու կամ շորթելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 2 անձ, իսկ 2018 թվականին՝ 7, աճը՝ 5 ($7-2=5$) անձ:

- Ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատման համար (ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 8 անձ, իսկ 2018 թվականին՝ 20, աճը՝ 12 ($20-8=12$) անձ:

- Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդված) 2017 թվականին դատապարտվել է 13 անձ, իսկ 2018 թվականին՝ 22, աճը՝ 9 ($22-13=9$) անձ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող միջնորդություններ

2018 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացված 22474 միջնորդություններից 17400-ը (77,4%) վերաբերել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին, որից 2044-ը (11,7%) ($2044:17400*100=11,7\%$) հանդիսացել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն: Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին 2044 միջնորդություններից 1935-ը (94,7%) ($1935:2044*100=94,7\%$) բավարարվել է, 9-ը (0,5%) ($9:2044*100=0,5\%$) բավարարվել է մասնակի, 90-ը (4,4%) ($90:2044*100=4,4\%$)՝ մերժվել, 7-ը (0,3%) ($7:2044*100=0,3\%$)

թողնվել է առանց քննության, իսկ 3-ը (0,1%) 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է գրավը՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց, կիրառելու մասին 906 միջնորդություն, որից 173-ը (19,1%) բավարարվել է, 713-ը (78,7%)՝ մերժվել, 9-ը՝ թողնվել է առանց քննության, 5-ը միացվել է մեկ վարույթում, իսկ 6-ը՝ 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Համեմատության կարգով նշենք, որ 2017 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացված 20675 միջնորդություններից 16749-ը (81%) վերաբերել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին, որից 2363-ը (14,1%) ($2363:16749*100=14,1\%$) հանդիսացել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն: Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին 2363 միջնորդություններից 2220-ը (93,9%) ($2220:2363*100=93,9\%$) բավարարվել է, 12-ը (0,5%) ($12:2363*100=0,5\%$) բավարարվել է մասնակի, 127-ը (5,3%) ($127:2363*100=5,3\%$)՝ մերժվել, 3-ը թողնվել է առանց քննության, իսկ 1-ը՝ 2017 թվականի դեկտեմբերի 29-ի դրությամբ եղել է անավարտ: Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է գրավը՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց, կիրառելու մասին 788 միջնորդություն, որից 125-ը (15,9%) բավարարվել է, 4-ը (0,5%) բավարարվել է մասնակի, 641-ը (81,3%)՝ մերժվել, 8-ը՝ թողնվել է առանց քննության, իսկ 10-ը՝ 2017 թվականի դեկտեմբերի 29-ի դրությամբ եղել է անավարտ:

Այսպիսով, 2018 թվականին ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացված միջնորդությունների թիվն աճել է 1799-ով (8,7%):

ՎԵՐԱՔՆՆԻՋ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում 2018 թվականի ընթացքում ստացվել է 4216 վերաքննիչ բողոք՝ 4005 դատական ակտի դեմ (այսինքն՝ բողոքարկվել է ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից կայացված

դատական ակտերի 16,6%-ը ($4005:24107*100=16,6\%$): Բերված բողոքներից 1601-ով (38%) բողոքարկվել է քրեական գործերով կայացված 1468 դատական ակտ, իսկ մնացած՝ 2615-ով (62%) բողոքարկվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող 2537 դատական ակտ:

Քրեական գործերով բողոքարկված 1468 դատական ակտերով վերաքննիչ վարույթն ավարտվել է 1144-ով (77,9%), այդ թվում՝ 550 (48,1%) դատական ակտ թողնվել է անփոփոխ, 390-ը (34%) բեկանվել է, 63-ը (5,5%) թողնվել է առանց քննության, 27-ով (2,4%) վերաքննիչ վարույթը կարճվել է, 40-ով (3,5%) վերաքննիչ բողոքը չի քննարկվել և կիրառվել է համաներում, 74-ով (6,5%) վերաքննիչ բողոքի վարույթ ընդունելը մերժվել է: Բեկանված 390 ակտերից 33-ով (8,5%) գործն ուղարկվել է ստորադաս դատարան նոր քննության, 357-ով (91,5%) ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխվել կամ կայացվել է գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող դատական ակտերի դեմ բերված 2615 բողոքներից բավարարվել է 367-ը (14,1%), մերժվել՝ 1569-ը (60%), 252-ը (9,6%) թողնվել է առանց քննության, 64-ով (2,4%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 363-ը (285 դատական ակտի դեմ) (13,9%) 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Բողոքարկված 4005 դատական ակտի դեմ բերված ընդհանուր 4216 բողոքներից 918-ը (21,8%) ներկայացվել է դատախազության կողմից, որոնցից 223 (24,3%) բողոքի քննություն 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացքը լուծված 695 ($918-223=695$) բողոքներից 213-ը (30,6%) բավարարվել է, 435-ը (62,6%)՝ մերժվել, 21-ով (3%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 26-ը (3,8%)՝ թողնվել է առանց քննության:

Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում 2017 թվականի ընթացքում ստացվել է 3722 վերաքննիչ բողոք՝ 3460 դատական ակտի դեմ (այսինքն՝ բողոքարկվել է ՀՀ առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից կայացված դատական ակտերի 15,2%-ը ($3460:22735*100=15,2\%$)): Բերված բողոքներից 1501-ով (40,3%) բողոքարկվել է

քրեական գործերով կայացված գործն ըստ էության լուծող 1365 դատական ակտ, իսկ մնացած՝ 2221-ով (59,7%) բողոքարկվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող 2095 դատական ակտ:

Քրեական գործերով բողոքարկված 1365 դատական ակտերով վերաքննիչ վարույթն ավարտվել է 1079-ով (79%), այդ թվում՝ 674 (62,5%) դատական ակտ թողնվել է անփոփոխ, 338-ը (31,3%) բեկանվել է, 40-ը (3,7%) թողնվել է առանց քննության, 27-ով (2,5%) վերաքննիչ վարույթը կարճվել է: Բեկանված 338 ակտերից 34-ով (10,1%) գործն ուղարկվել է ստորադաս դատարան նոր քննության, 304-ով (89,9%) ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխվել կամ կայացվել է գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող դատական ակտերի դեմ բերված 2221 բողոքներից բավարարվել է 293-ը (13,2%), մերժվել՝ 1328-ը (59,8%), 107-ը (4,8%) թողնվել է առանց քննության, 39-ով (1,8%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 454-ը (328 դատական ակտի դեմ) (20,4%) 2017 թվականի դեկտեմբերի 29-ի դրությամբ եղել է անավարտ:

Բողոքարկված 3460 դատական ակտի դեմ բերված ընդհանուր 3722 բողոքներից 1007-ը (27%) ներկայացվել է դատախազության կողմից, որոնցից 251 (24,9%) բողոքի քննություն 2017 թվականի դեկտեմբերի 29-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացքը լուծված 756 (1007-251=756) բողոքներից 217-ը (28,7%) բավարարվել է, 490-ը (64,8%)՝ մերժվել, 11-ով (1,5%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 38-ը (5%)՝ թողնվել է առանց քննության:

Այսպիսով, 2018 թվականի ընթացքում << վերաքննիչ քրեական դատարանում ստացված բողոքների ընդհանուր թիվն աճել է 494-ով (4216-3722=494) 13,3% (494:3722*100=13,3%), այդ թվում՝ քրեական գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված բողոքների թիվն աճել է 100-ով (1601-1501=100) 6,7% (100:1501*100=6,7%), մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող դատական ակտերի դեմ բերված բողոքների թիվն աճել է 394-ով (2615-2221=394) 17,7% (394:2221*100=17,7%):

Քրեական գործերով ավարտված վերաքննիչ վարույթների թիվն աճել է 65-ով ($1144-1079=65$) 6%, անփոփոխ թողնված դատական ակտերի թիվը նվազել է 124-ով ($674-550=124$) 18,4%, իսկ բեկանված դատական ակտերի թիվն աճել է 52-ով ($390-338=52$) 15,4%:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող դատական ակտերի դեմ բերված բողոքներից բավարարվածների թիվն աճել է 74-ով ($367-293=74$) 25,2%, մերժված բողոքների թիվն աճել է 241-ով ($1569-1328=241$) 18,1%, առանց քննության թողնված բողոքների թիվն աճել է 145-ով ($252-107=145$), վերաքննիչ վարույթը կարճելու դեպքերն աճել է 25-ով ($64-39=25$) 64,1%:

Այսպիսով, բերված բողոքների ընդհանուր թիվն աճել է 494-ով ($4216-3722=494$) 13,3%, ավարտված վերաքննիչ վարույթների արդյունքում բավարարված բողոքների ընդհանուր թիվն աճել է 126-ով ($((390+367=757)-(338+293=631)=126)$) 20%, իսկ մերժված բողոքների թիվն աճել է 117-ով ($((550+1569=2119)-(674+1328=2002)=117)$) 5,8%:

Դատախազության կողմից բերված բողոքների ընդհանուր թիվը նվազել է 89-ով ($1007-918=89$) 8,8%, այդ թվում՝ ավարտված վերաքննիչ վարույթների արդյունքում բավարարված բողոքների թիվը նվազել է 4-ով ($217-213=4$), իսկ մերժված բողոքների թիվն աճել է 55-ով ($490-435=55$) 12,6%:

Այսպիսով, ՀՀ առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարաններում 2018 թվականի ընթացքում ավարտված գործերով կայացված 24107 ($2968+21139=24107$) դատական ակտերից բողոքարկվել է 4005-ը՝ 16,6%-ը ($4005:24107*100=16,6\%$), որից բեկանվել է 740-ը ($390+367-17=740$) 18,5% ($757-17=740$, նշված 17 թիվը կազմում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից կայացված թվով 17 դատական ակտերը բեկանելու և առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերին օրինական ուժ տալու դեպքերը), այսինքն՝ ՀՀ առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարաններում 2018 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 96,9% ($24107-740=23367:24107*100=96,9\%$), իսկ բողոքարկված գործերի կայունությունը կազմում է 81,5% ($4005-740=3265:4005*100=81,5\%$):

ՎՃՈՒՐԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում 2018 թվականի ընթացքում ստացվել է 2213 վճռաբեկ բողոքներ, որոնցով բողոքարկվել է 1544 դատական ակտ:

Բերված 2213 բողոքներից 626-ը (28,4%) վերադարձվել է, 175-ը (7,9%) ընդունվել է վարույթ, 72-ը (3,2%)՝ թողնվել է առանց քննության, 983-ով (44,4%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, 142-ով (6,4%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 2-ն (0,1%) ուղարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, 213 (9,6%) բողոքի ընթացքը 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Վարույթ ընդունված 175 բողոքներից՝

-18-ը (վարույթ ընդունվածի 10,4%, ընդհանուր բողոքների 0,8 %) մերժվել է,

-66-ը (վարույթ ընդունվածի 37,7%, ընդհանուր բողոքների 3%) բավարարվել է ամբողջությամբ,

-30-ը (վարույթ ընդունվածի 17,1%, ընդհանուր բողոքների 1,3%)՝ բավարարվել է մասնակի,

-2-ը (վարույթ ընդունվածի 1,1%, ընդհանուր բողոքների 0,1%)՝ բավարարվել է մասնակի, արդյունքում դատական ակտերը թողնվել են անփոփոխ,

-3-ով (վարույթ ընդունվածի 1,7%, ընդհանուր բողոքների 0,1%)՝ վարույթը կարճվել է,

-56-ը (վարույթ ընդունվածի 32%, ընդհանուր բողոքների 2,5%) 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Ընդ որում, ամբողջությամբ բավարարված հիշյալ 66 բողոքներից 17-ով բեկանվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտը և օրինական ուժ է տրվել առաջին աստիճանի դատարանի դատական ակտին:

Բերված 2213 բողոքներից 267-ը (12,1%) ներկայացվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից, որից 45-ն (16,8%) ընդունվել է վարույթ, 20-ը (7,5%) վերադարձվել է, 161-ով (60,3%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ 41-ի (15,4%) ընթացքը 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 45 բողոքներից 26-ը բավարարվել է ամբողջությամբ, 4-ը բավարարվել է մասնակի, 1-ը բավարարվել է մասնակի և դատական ակտը թողնվել է

անփոփոխ, 2-ը մերժվել է, իսկ 12-ը 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Բերված 2213 բողոքներից 1946-ը (87,9%) ներկայացվել է դատավարության այլ մասնակիցների կողմից, որից 130-ը (6,7%) ընդունվել է վարույթ, 72-ը (3,7%) թողնվել է առանց քննության, 142-ով (7,3%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 606-ը (31,2%) վերադարձվել է, 822-ով (42,2%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, 2-ն (0,1%) ուղարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, իսկ 172-ը (8,8%) 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 130 բողոքներից 40-ը բավարարվել է ամբողջությամբ, 26-ը բավարարվել է մասնակի, 1-ը բավարարվել է մասնակի և դատական ակտը թողնվել է անփոփոխ, 16-ը մերժվել է, 3-ով վարույթը կարճվել է, իսկ 44-ը 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում 2017 թվականի ընթացքում ստացվել է 1911 (ստացված 1647+264 փոխանցված) վճռաբեկ բողոքներ, որոնցով բողոքարկվել է 1454 դատական ակտ:

Բերված 1911 բողոքներից 379-ը (19,8%) վերադարձվել է, 100-ը (5,2%) ընդունվել է վարույթ, 114-ը (6%)՝ թողնվել է առանց քննության, 1095-ով (57,3%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, 11-ով (0,6%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 212 (11,1%) բողոքի ընթացքը 2017 թվականի դեկտեմբերի 29-ի դրությամբ եղել է անավարտ:

Վարույթ ընդունված 100 բողոքներից՝

-7-ը (վարույթ ընդունվածի 7%, ընդհանուր բողոքների 0,4%) մերժվել է,

-51-ը (վարույթ ընդունվածի 51%, ընդհանուր բողոքների 2,7%) բավարարվել է ամբողջությամբ,

-25-ը (վարույթ ընդունվածի 25%, ընդհանուր բողոքների 1,3%)՝ բավարարվել է մասնակի,

-17-ը (վարույթ ընդունվածի 17%, ընդհանուր բողոքների 0,9%) 2017 թվականի դեկտեմբերի 29-ի դրությամբ եղել է անավարտ:

Ընդ որում, ամբողջությամբ բավարարված հիշյալ 51 բողոքներից 27-ով բեկանվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտը և օրինական ուժ է տրվել առաջին աստիճանի դատարանի դատական ակտին:

Բերված 1911 բողոքներից 272-ը (14,2%) ներկայացվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից, որից 44-ն (16,2%) ընդունվել է վարույթ, 19-ը (7%) վերադարձվել է, 173-ով (63,6%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ 36-ի (13,2%) ընթացքը 2017 թվականի դեկտեմբերի 29-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 44 բողոքներից 29-ը բավարարվել է ամբողջությամբ, 8-ը բավարարվել է մասնակի, 2-ը մերժվել է, իսկ 5-ը 2017 թվականի դեկտեմբերի 29-ի դրությամբ եղել է անավարտ:

Բերված 1911 բողոքներից 1639-ը (85,8%) ներկայացվել է դատավարության այլ մասնակիցների կողմից, որից 56-ը (3,4%) ընդունվել է վարույթ, 114-ը (7%) թողնվել է առանց քննության, 11-ով (0,6%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 360-ը (22%) վերադարձվել է, 922-ով (56,3%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ 176-ը (10,7%) 2017 թվականի դեկտեմբերի 29-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 56 բողոքներից 22-ը բավարարվել է ամբողջությամբ, 17-ը բավարարվել է մասնակի, 5-ը մերժվել է, իսկ 12-ը 2017 թվականի դեկտեմբերի 29-ի դրությամբ եղել է անավարտ:

Այսպիսով, 2018 թվականի ընթացքում՝ 2017 թվականի համեմատությամբ, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում ստացված ընդհանուր բողոքների քանակն ավելացել է 302-ով ($2213-1911=302$) 15,8%, բողոքարկված դատական ակտերի թիվը՝ 90-ով ($1544-1454=90$) 6,2%, ամբողջությամբ բավարարվածների թիվն աճել է 15-ով ($66-51=15$) 29,4%, իսկ մասնակի բավարարվածների թիվն ավելացել է 7-ով ($32-25=7$) 28%:

Դատախազության կողմից բերված բողոքների թիվը նվազել է 5-ով ($272-267=5$), ամբողջությամբ բավարարված բողոքների թիվը նվազել է 3-ով ($29-26=3$), իսկ մասնակի բավարարված բողոքների թիվը նվազել է 3-ով ($8-5=3$):

Դատավարության այլ մասնակիցների կողմից բերված բողոքների թիվն աճել է 307-ով ($1946-1639=307$) 18,7%: Դատավարության այլ մասնակիցների կողմից բերված բողոքներից մերժված բողոքների թիվն ավելացել է 11-ով ($16-5=11$), ամբողջությամբ բավարարված բողոքների թիվն աճել է 18-ով ($40-22=18$), մասնակի բավարարված բողոքների թիվը՝ 10-ով ($27-17=10$):

Այսպիսով, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում 2018 թվականի ընթացքում ավարտված գործերով կայացված 3396 ($1144+2252=3396$) դատական

ակտերից վճռաբեկության կարգով բողոքարկվել է 1544-ը (45,5%), որոնցից բեկանվել է 96-ը ($66+30=96$) 6,2%, այսինքն՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում 2018 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 97,2% ($3396-96=3300:3396*100=97,2\%$), իսկ բողոքարկված դատական ակտերի կայունությունը կազմում է 93,8% ($1544-96=1448:1544*100=93,8\%$):

Այսպիսով, քրեական գործերով և միջնորդություններով ընդհանուր կայունությունը կազմում է 96,6% (Քայլ 1-ին՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից բեկանված դատական ակտերի թիվը՝ 740-ը ($390+367=757-17=740$) նշված 17 թիվը կազմում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից կայացված թվով 17 դատական ակտերը բեկանելու և առաջին արյանի դատարանի դատական ակտերին օրինական ուժ փախու դեպքերը), գումարվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից բեկանված դատական ակտերի թվին՝ 79-ին ($96-17=79$, նշված 17 թիվը կազմում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 17 դատական ակտերը բեկանելու և առաջին արյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ փախու դեպքերը), ստացվել է 819 բեկանված դատական ակտ: Քայլ 2-րդ՝ ընդհանուր իրավասության դատարաններում ավարտված դատական ակտերի թվից՝ 24107-ից, հանվել է բեկանված դատական ակտերի թիվը՝ 819-ը, ստացվել է 23288, այսինքն՝ 23288 դատական ակտ մնացել է օրինական ուժի մեջ, ուստի դատական ակտերի ընդհանուր կայունությունը կազմում է 96,6% ($24107-819=23288:24107*100=96,6\%$):

ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2018 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է 129941 քաղաքացիական գործ, որից՝

- 20799 գործով (16%) հայցադիմումը վերադարձվել է,
- 272 գործով (0,2%) հայցադիմումի ընդունումը մերժվել է,
- 106617 (82,1%) գործով հայցադիմումն ընդունվել է վարույթ,
- 2253 (1,7%) հայցադիմումի վերաբերյալ 28.12.2018թ. դրությամբ որոշում չի կայացվել:

Վարույթ ընդունված 106617 գործերից՝

- 61304-ով (57,5%) կայացվել են վճիռներ, այդ թվում՝ հայցի լրիվ բավարարմամբ՝ 45538-ը (վճիռների 74,3%), հայցի մասնակի բավարարմամբ՝ 5910-ը (վճիռների 9,6%), հայցի մերժմամբ՝ 2874-ը (վճիռների 4,7%), վարույթի կարճմամբ՝ 6982-ը (վճիռների 11,4%), ընդ որում՝ կարճված վճիռներից 986-ով (վճիռների 1,6%, կարճված վարույթների՝ 14,1%) հաստատվել է կնքված հաշտության համաձայնությունը,
- 113 հայց թողնվել է առանց քննության,

(ընդհանուր առմամբ կայացվել է 82488 դատական ակտ՝ 20799+272+61304+113).

- 23 գործերով կայացվել են գործերը մեկ վարույթում միացնելու մասին որոշումներ,

- 45177-ը՝ (ստացված գործերի 34,8%, վարույթ ընդունված գործերի 42,4%) անավարտ է:

Համեմատության կարգով նշենք, որ 2017 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է 137003 քաղաքացիական գործ, որից՝

- 6993 գործով (5,1%) հայցադիմումը վերադարձվել է,
- 228 գործով (0,1%) հայցադիմումի ընդունումը մերժվել է,
- 129712 (94,7%) գործով հայցադիմումն ընդունվել է վարույթ,
- 70 (0,1%) հայցադիմումի վերաբերյալ 29.12.2017թ. դրությամբ որոշում չի կայացվել:


Վարույթ ընդունված 129712 գործերից՝

- 83953-ով (64,7%) կայացվել են վճիռներ, այդ թվում՝ հայցի լրիվ բավարարմամբ՝ 63631-ը (վճիռների 75,8%), հայցի մասնակի բավարարմամբ՝ 9361-ը (վճիռների 11,2%), հայցի մերժմամբ՝ 2785-ը (վճիռների 3,3%), վարույթի կարճմամբ՝ 8176-ը (վճիռների 9,7%), ընդ որում՝ կարճված վճիռներից 1189-ով (վճիռների 1,4%, կարճված վարույթների՝ 14,5%) հաստատվել է կնքված հաշտության համաձայնությունը,
- 62 հայց թողնվել է առանց քննության,

(ընդհանուր առմամբ կայացվել է 91236 դատական ակտ՝ 6993+228+83953+62).

- 30 գործերով կայացվել են գործերը մեկ վարույթում միացնելու մասին որոշումներ,
